


ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵԱՊՂՆՈՅ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՈՅ»

ԵՒ Ս. ՂԱԶԱՐՈՒ ԳՐԶԱԳԻՐՆԵՐԸ



Էջմիածնի տպարանէն անցեալ 1921-ին լոյս տեսաւ մեր ազգային մատենագրութեան համար խիստ շահեկան հրատարակութիւն մը. Շապուհ Բագրատունւոյ պատմութիւնն էր, որ ցարդ անհետացած էր. ան մեզի ծանօթ էր միայն մի քանի հայ պատմագիրներու միջոցաւ: Հրատարակչներն են ՚ Գ. Տէր-Մկրտչեան և Մկրտչկիսկոպոս:

Այս կէտերը երկը մեզ առիթ կու տայ ըսելու որ Ս. Ղազարու մէջ ի ձեռագիր Պատմութեան Սոկրատայ ունինք Շապուհի մէկ պատառիկը. բայց սա նոյնն է, (ի բաց առեալ ամենասակաւ և աննշան տարբերակներ), ինչ որ մէջ բերուած է Սամուէլ Անցելոյ Երանութեանց մէջ: Միւս, ըստ էպիկոպոս ևս կը յիշատակէ Շապուհի իր հմտալից Զառաշաբանին մէջ, թէ կը գտնուի միևնոյնը Էջմիածնի և Երուսաղեմի մատենադարանաց մի քանի ձեռագիրներուն մէջ:

Բայց ինչ որ կ'ուզենք ներկայացնել հոս Շապուհի կրթութեան ուրիշ պատմութիւն մ'է, որ վառացս Զեռագրատան մէջ պահուած է խմբ. ԻԱ. Բ. Թիւ 6-ի մէջ: Արդէն Մկրտչկի եպս. իւր ներածութեան մէջ կը յիշատակէ անոր գոյութիւնը, առնելով Հ. Մ. Ազեբեանի կազմած անտիպ Զեռագրացուցակէն: Սոյն խմբ.ը կը կրէ երկու

տիտղոսներ իր կողքին վրայ: Առաջինը կը զգտնուի վերի ծայրը՝ կայցուած տպագիր թղթիկի մը վրայ. «Պատմաիկ ի Շապուհ պատմագրի» երկրորդը՝ կողքին մէջտեղ՝ ձեռքով գրուած. «Պատմաիկ Շապուհ Պատմութեան»:

Առաջնոյ վերնագիրն է. «Պատմական հատուածք հունեալ ի ձեռագրաց կարասկոտ վարդապետի Շահնագրասնց, որը կարծիք գոյ Շապուհոյ»: Ասոր նկատմամբ պէտք է ըսենք նախ, որ մի քանի մասեր գոյը կ'ընթանան Յովհաննէս կաթողիկոսի Պատմութեան հետ, նոյն իսկ բառաւ բառ. մերթ մերինը կը յառաջէ՝ գլխաւոր կէտերը շուրջակեղով, և կամ թողով շարքը՝ կ'անցնի անէջ նախնեաց դէպքերուն: Երբեմն ալ կը համառուէ, մինչ Յովհաննէս Պատմագիրը կը դնէ նաև անոնց պարագաները. կան և մի քանի մասեր, որոնց չկրցանք հանդիպել Յովհաննէս Պատմութեան մէջ:

Ինչպէս Մկրտչկի եպս. ալ կ'անգրադարձնէ, Շապուհի պատմութեան վրայ ամենէն աւելի որոշ և բացայայտ տեղեկութիւն կու տայ արդէն Յովհաննէս կաթողիկոս. զոր օրինակ իր յառաջաբանին մէջ խօսելով Աշոտ Բագրատունւոյ մասին՝ այսպէս կ'աւելցնէ. «Զի թէպէտ նախքան զմեզ Շապուհ Բագրատունւոյ և մերուն

1. Շապուհի Պատմութեան գլխաւոր մասերն մին է, տարբեր վերնագրի տակ, «Հապուհն և ց իս ի Պատմութիւն»-ը, որուն առաջին կը հանդիպենք մեր հին ձեռագիրներուն մէջ ճիշդ այնպէս՝ ինչպէս կը դիտէ Մկրտչկի եպս., այսինքն «Սկզբնական բնագրից փոխառած հատածները հանուսիք և Ոսկեփորիկ կազմողները խոշոր փոփոխութեան են ենթարկել աւելի նորմալացնելով վարքագրական ձեւերն և իրենց հակակցածի պէս են սրբագրել նաև սկզբնափոխ լեզուն» (էջ XXXIV):

Այս ոճին տակ, օրինակէ համար, մեր ձեռնարկներէն ամենայնազին, զրուած ՌՆԳ=1224 կը պարունակէ սոյն Հապուհն և ց իս ի Պատմութիւն, որուն կը հետևի նաև մեր առէկ գտնուած Ոսկեփորիկ իԳ-ը (տես տեղեկութիւն 1921 Նոյս. էջ 305): Սոյն ձեռագիրները կը լրացնեն, որքան որ ընկած ըլլայ, Շապուհի նորա-

տիպ պատմութեան մէկ թերի կէտը, որու մասին՝ ծանօթութեանց մէջ կը պակսի որ և է լուսարանութիւն, «ԱՐԱՐԱՍ» ամսաթերթի (1888) մէջ յրատարակուածը՝ որուն հետ կը համամատէր՝ ճիշդ յաջորդ պարբերութեանց սկսուած ըլլալով Այսպէս. Շապուհի Պատմ.ը կը դնէ և և բոամբ շատ զաշխարհ շայոյ, Այգլանից և «Ափխազաց (---) բռնացուի ի վերայ յարեկից և յարեմից, և հարաւոյ» (էջ 4 տող 18-20) իսկ ձառնը տիրը այսպէս. և և առնննեաց զաշխարհ շայոյ, և «զազաւան, և զաշխարհ լուկիդացւոյ որ են ափխազ» «Եւ այնպէս բռնաւոր ի վերայ արեկից և արեմից «և հարաւոյ» նոյնպէս նաև Ոսկեփ. օրիկը և և առնն. «նեաց զաշխարհ շայոյ. և զաղաւան և զաշխարհ լուկ. «զիւցւոյ, որ են ափխազ. և այնպէս բռնացուի ի «վերայ արեկից» ևն:

ժամանակի պատմագրի գրով դրոշմակ է գնդա-
րայն գործող և զգնացից և իմաստից և միջա-
րանաց և շինութեանց և խաղաղութեան հան-
դիսիւ... (Յովհ. Նաթ. Պատմ. Հայոց. Երու-
սաղէմ 1867 էջ Թ)։

Երկրորդ և երրորդ պատառիկները՝ արդէն կը
գտնուին Ուխտանէս Պատմչին քով (տես Ուխտ.
Պատմ. Հատ. Ա. Գլ. Հն և ՀՁ). այս տար-
բերութեամբ որ մինչ միայն երկրորդը, այսինքն
Ուխտանէսի Հն Գլուխը Շապուհին կ'ընծայեն,
ինչպէս ինքնին կը գուշակուի վերջին խօսքերէն.
«Այդ ասացաք գորպիսութիւն քաղին ի պատ-
մութեանն Շապիհոյ», մեր խմբ.ին սոյն երրորդ
պատառիկն ալ (Ուխտ. ՀՁ Գլուխը) Շահնա-
զարեանցի կամ օրինակողին կողմանէ կարծուած
է Շապուհի։

Առաջին պատառիկը ամբողջութեամբ կը դը-
նենք հոս, քննութիւնը բանասիրաց թողով։

Հ. Ղ. Տ.

Պատմական Բատուածք Բանեալ ի ձե-
ռագրոց կարապետ վարդապետի Շահնա-
զարեանց, որք կարճին գոլ Շապիհոյ։

«Յաւուրս թագաւորին Սմբատայ եկն
Յուսուփ ոստիկան ի Հայս և միջնորդու-
թեամբ քարտուղարի իւրոյ Ասուրայ լինի
սէր ընդ Սմբատ և ընդ Եուսուփ։ Բազում
ընծայս և թագս յդէ Սմբատայ ու Հայ-
րապետի Հայոց Յովհաննիսի՝ պարգևս
առաւտս ըստ արժանւոյն. զոր առաւել
ուրախացեալ արքայ ընդ այնքան ի վերայ
իւր պարգևացն։ Եւ եղև խաղաղութիւն
աշխարհիս Հայոց և շինութիւն. և հան-
գուցեալք ի հինից ասպատակաց՝ շինէին
եկեղեցիս՝ վիմայարդ հաստահեղոյս ձու-
լեալ հրով ի մենաստանս և յաւանս և
յազարակս. բայց առաւել ևս քան զյու-
լովս Հայկազանցն զրով՝ իշխանն Գրիգոր
և նորին եղբարք Սահակ և Վասակ, որք
հայրենական սեփականութեամբ տիրէին
գաւառացն, որք չըլապատեալ կան շուրջ
զեզերք Ծովակին զեղամայ վիճակին ցան-
կալի պողտաածօղ արգասիք պարարտու-
թեամբ։

«Ի վերայ այսորիկ բարեբաստութեանց

թագաւորն Հոովմայեցեաց Լևոն, որպէս
սիրելի որդւոյ, առաքէ թագ և ընծայ
թագաւորին մերոյ Սմբատայ։

«Իսկ Յուսուփ փոքր ինչ նեղարտեալ,
ամիրապետ նորա զրէ հրաման Սմբատայ
մարտնչել և կորուսանել զՈւսուփ, և զի
ուխտ սիրոյ կայր ընդ Սմբատ և ընդ
Յուսուփ՝ յայտնի որպէս հակառակ ամի-
րապետի ելանէր զօրօք ի վերայ Յուսուփ.
Բայց ի ծածուկ զրէր առ Յուսուփ յօգ-
նութիւն գալ նորա և ոչ ի պատերազմել։

«Իսկ Յուսուփ թէպէտ և հաւատարմ
զրելոյն Սմբատայ, սակայն ի սաղիւրջ
սպրդօղ չարաւեղուաց հակամէտ ի չարն
բերիւր զի մի կործանեացէ զաշխարհ մեր.
Յետ այսորիկ հաւանական միտս Յուսուփ
ստացեալ և ի հարթայարմար հնազան-
դութիւն ամիրապետին բերեալ՝ զպետու-
թիւն կալուածոց նորա դարձեալ առ նա
նուաճել տային. և զրդմամբ Յուսուփ
ամիրապետն և Յուսուփ սաստկացուցանեն
զսակ հարկին տալ Սմբատայ ամիրապե-
տին ի մերս յաշխարհէ. իսկ արքայ հըն-
գորդեալ զերկիրն՝ (մ) ի մասամբ զոստիկանն
կուրացուցանէ և չորիւր՝ զպէտս զօրացն
և թագաւորութեանն լցուցանէ. իսկ յայն
նախարարացն յայտ իմն ծանր երեւէր։

«Ապա ոմն ի մեծ նախարարացն Հասան
անուն յիւր կողմն դարձուցեալ իբրև արս
հնգեռասան նաև ընդ թագաւորն վրաց
սպանանել զթագաւորն Սմբատ։ Իսկ իբրև
առաքեն զաղտագողի սպանանել զՍմբատ՝
յայտնէին իբրեն և վաղվադակի Ատրնեբութն
և Հասան հասանեն յԱլի. և զոր ինչ
պահեստի կայր արքայի, զամենայն յա-
ւան ի առեալ գնան։ Եւ Սմբատ առեալ
զզօրս դիմէ ի վերայ նոցա. և արքայ ոչ
տայ թոյլ մեղանչել ոմանց, այլ զհակա-
ռակն խնդրէ. զոր Ատրնեբութն իւրովի
գայ առ արքայ. և զայլ ևս զգրաւա-
րարն կալեալ՝ զաչս նոցա խաւաքեցու-
ցանէ և զորդի Ատրնեբութնի պատանդ ընդ
ինքն բերէ. և զԱտրնեբութն հաշտ համրու-
րիւ արձակէ. և այսպէս աստուածական
նախախնամութեամբ հաստատէ զթագա-
ւորութիւն իւր Սմբատ։

«Այս Յուսուփ յետոյ կալաւ զհայրապետն Յովհաննէսն և եղ ի բանտի ի Գուին. թէ՛ պէտ էառ զսակ հարկին 60,000 զեկան. բայց ոչ լիացաւ: Այս եղև յ358 թուին Հայոց: Այս ոստիկան Յուսուփ սպանանէ զթագաւորն Սմբատ և զայլ բազում իշխանս վասն փրկստոսական հաւատոյս:

«Գարծեալ ի թուականութեանս Հայոց 358 ի թագաւորութեանս Սմբատայ և ի հայրապետութեան Տեառն Յովհաննիսի, ոստիկանն Յուսուփ եկն ի Հայս. և վասն երկիւղի աւերման աշխարհիս Հայոց անձնատուր եղեն նմա իշխանքն Հայոց. մարզպանն Գուրգէն, եղբայր Գագկայ թագաւորին և Ուսիան, սպարապետն Հայոց, Աշոտ, եղբորորդի արքային Սըմբատայ և Գրիգոր, իսկ Յուսուփն անբարի զոմանս ոմանս զաղտնի ղեղոց մահացուցանէր, որպէս և զիշխանն Գրիգոր Հայկազնի ղեղոց լուծեալ ի կենաց և զԱշոտ, քոյրորդին Սմբատայ թագաւորին և զբաշ մանուկն Մուշեղ, զորդի թագաւորին և զմանուկ իշխանն Սմբատ նոյն ղեղոց սպան. և զտիրուհիս և զկանայս նոցա կալեալ ածին ի սոլ ի զերութիւնս:

«Իսկ եղբարքն Գրիգորի Սահակ և Վասակ յետ զբաւամահ լինելոյ եղբոր նոցա զփոյթ պնդութեան յանձինս բարձրացուցեալ և փախս առեալ ի նեղլացն զոնէ հնարս մարթասցեն զտանել ամբանալ ի սեպհական ամրոց իւրեանց տէրութեանն և ոչ զնալ ի գերութիւն յաշխարհ օտարաց մինչև անցէ բարկութիւն տեսնոն. և ապա նաւակաւոյ լեալք սրավար թիակոց, իբրև ի տապանի ինչ, երթեալ ղօղեալ ամբանային ի Սեան կղզին հանդերձ քրիստոսակրօն և ձգնաւոր մարքն իւրեանց և կանամբք և որդւովք և ազատագունդ բանակաւն. վասն զի զբանդեղեղ պղտորումն յորձանուտ իսմայէլական հինից ևս բան զևս սաստկացեալ բախէր զաւազահիմն տուն բնակութեան մերոյ:

«Իսկ ապա ազգեալ այն կանանցախօս, զառնահամրոյր Հազարացւոյն Յուսիփայ՝ զօրս զումարէ ի վերայ նոցա: Իբրև հասին յեզր ծովակին Սեանայ սուր թշնամ

ւոյն պատնէջ պաշարմամբ շուրջ զնորոց պատեալ: Իսկ ապա ի մտի եղեալ ի միասին սիրելի եղբարցն, զուցէ լըռւմն ինչ նոցա ի թշնամեացն լինիցի, և ի ջրասպատ անդնդոցն ոչ զտանիցի տեղի փախըստեան, և մատնեսցին ի ձեռս հեթաւորական բռնադատացն և նոցա տղմուտ չարութեանն: Եւ այնուհետև զձեռս նաւաստեացն զօրացուցեալ, և նաւեալ, չուեալ, զնացեալ մարքն իւրեանց հանդերձ և առ հասարակ ընտանեօք և աղիւիւս, որչափ ձեռն բաւականացաւ կրել՝ անկանէին հապճեպիւր յամուր զաւառն Միափորոյ:

«Իսկ զօրապետն Խամայէլեան մտեալ ի կղզի ամրոցին զմնացեալ կապուտ աւաւրն, ոչ սակաւ ինչ քան թէ բազումս ի դիպահոյ թողոյր. և ինքն ասպատակ սփռեալ ղիմէր կրթէր, անցանէր զհետ նոցա, որոց ընդ կրունկն դարձեալ և ի ղիմի հարեալ թշնամեացն և բազում վիրաւորս ի նոցանէ խառնեալ և ճարակ սրոյ տուեալ ի փախուստ զնոսա դարձուցանէին. և ինքեանք չուեալք, երթեալ, զնացեալ, ղօղեալ դադարէին յանձնաւարիտ ամրոցս մայրեացս Գարդմանայ և Արցախայ ակնկալեալ այցելութեան Տեառն Աստուծոյ: Անդ հանգեաւ ի փրկստոս պարկեշտասուն և սրբափայլ կրօնիւք մեծն ի ձգնաւորս մայրն նոցա, որ էր քոյր արքային Սմբատայ. որ յետ ամաց զառնաւոյ և տիրելոյ նոցա ի վերայ սեպհական և հայրենի իշխանութեանն՝ տարեալ հանգուցանէին զմարմին նորա ի քնարանի իւրում, մերձ ի ձեռակերտ եկեղեցին իւր ի Շաղուազումի:

«Ջայս ապա տեսեալ և զմտաւ ածեալ թագաւորն Գագիկ Արծրունի հանդերձ եղբարք իւրով Գուրգէնաւ, իբր թէ ի ձեռանէ նոցա և ի կարապետելոյ այս ամպրոպ չարութեան և ոճիրք զառնու

1. Լուսանցքին մէջ ընթերցող ոմն կապուտ մատիտով գրած է Պատ. Թաթլոյ:

2. Լուսանցքին մէջ նոյնպէս. «Իցէ՛ նոյն ընդ Շաղղումի, յորում կարգեաց Ս. Մեսրոպ դպրոց»:

Թեան զեղեալ շուրջ զեկեղեցեալ Քրիստոսի, ապաշխարեցին յապաշխարութիւն մեծ և հրաշաքեալը յոստիկանէն՝ գաղտագողի փոխեան առ արքայն Սմբատ, որ շոգեալ էր ի վայրս ձորոյն Երասխայ, ի քարանձաւին կապուտայ ամ մի խաղաղութեամբ:

«Եւ յետոյ պաշարեալ զամուրն իսմայէլեան զօրո՞ւն, իսկ զայն տեսեալ արքային Սմբատայ, որ բազում կոտորածք լինէին ի քրիստոնեայս, իբրեւ մօտալուտ իմն ի դահճաց խողխողեալը զմարդիկն նպատակի հանգոյն եղեալ՝ էջ յամրոցէն ուխտ երդման ընդ նաւ եղեալ ոստիկանին, և ընկալաւ զՍմբատ սիրով պարգեւալ նաւ բազում ընծայս. և յետոյ ստեալ երգմանն կապեաց և եղ ի բանտի ամ մի. և ապա բազում չարչարանս և անհնարին նեղութիւնս ածէին ի վերայ նորա դահիճքն. և զանձեռոցիկն թագաւորական առեալ ի նմանէ՝ կեղտաշորոտիք մինչև ի սիրտն լնուին. և եղէզս ի ծածուկ անդամն վաբէին. և ապա զզուլին հատանէին և զմարմինն ի փայտէ կախին ի Դուին քաղաքի, որ թագաւորեաց ամս 22: Եւ մայր Թագաւորին և որդի նորա իշխանն ի բանտի մեռան ի Դուին և թաղեցան ի դուռն եկեղեցոյն: Իսկ միւս որդին Սմբատայ Աշոտ բազում ընթացութիւնս և քաջութիւնս ցուցանէր և պահէր զբոլոր ամրոցս տէրութեան հօր իւրոյ ձեռնտուութեամբ իշխանին Գորգունեայ, նաև թագաւորին վրաց և թագաւորին Գագկայ վանեցոյ: Չոր լուս զքաջութեան նորա թագաւորն Յունաց Կոստանդին զորով հայրապետին Գէորգայ. և առաջէ զոմն իշխանն թէ՛ողորոս վաստիլիսկոս զկնի նորա. և զնացեալ ի Կոստանդնուպօլիս դառնայ ի Հայս թագիւ և իշխանութեամբ և անթիւ ընծայիւք, որպէս որդի մարտիրոսի և սուրբ թագաւորի:

« Իսկ յետ տիրելոյ աշխարհին Հայոց Յուսիփայ ժողովեցան առ նա իշխանքն Հայոց, և նա ընկալաւ զնոսա և շնորհեաց նոցա ընծայս, այլ և բազում զգեստս և զարդս ոսկեճամուկս և ծիրանին և

երեսի լակոնացի և բեհեզս նոցա մատուցանէր. և կամարս և մանեակս ոսկեղէնս և նոժոյցս սրավարս ճորապանոյնս ի զէնս և ի զարդս և զիրկն զպարանոցօք արկեալ և հուպ ընդ հուպ համրոյր մերձեցուցեալ զնոսա, ապապէս շոգմօզէր շոգմութեամբ բանիւ հնազանդիլ նորայն բանի, իսկ նոցա ի բաց զինքեանս ի նմանէ շոգեալ ճողպարէին, և հապճեպ տուեալ և դիմագրաւ դիմեալ առ ընկերս իւրեանց փութային. և ոչ հաւանէին պաշտօնի Մակուրան կուրանի դենիցն մահադեղի, որ և ընկալան մարտիրոսութեամբ զպսակն կենաց ի Քրիստոսէ Աստուծոյ մերմէ:

«Դարձեալ միւսանգամ սկսաւ անիծեալն տարապարտ սողիլ, զեռալ, սպրդել զանձն ի ներքս արկանել ի հոգեւոր ցանկապատ այգեստանի տեսուն զօրութեանց, և հուրն, որ երբեմն արհամարհեցաւ և զիջաւ՝ սկսաւ վերստին արծարծիլ և բոցակէզ հրդեհն մեծամեծս գործել. և դժբողք խարդախ ցտան քրիստոնէական հաւատոյս, որ ի Քրիստոս. և յարուցեալ լալածանս ընդդէմ եկեղեցոյ արդոյ՝ արարին իբրեւ զխուշս մրգապահաց և իբրեւ զանտառս փայտից և այրեցին զսրբութիւն Տեառն ի հուր. զենին զենումն անօրէնութեան և զոհեցին զզոհ պղծութեան ի յարկս արդարոց և արհամարհեցին զյուսացեալսն յԱստուած:

«Մըվան ոստիկան եկն յաշխարհս Հայոց. և ընդ ամենայն ամրոցս մարտ եղեալ, և զորս զբաւէր յինքն՝ քանդէր, իսկ յլանս կողմին, որ ի ծովակրին Գեղամայ, թէպէտ և յսկզբանն նուագի ոչ ըմբռնեցաւ ի ձեռս նորա. սակայն զկնի երկեամ մի ամաց մատնեցաւ ի ձեռս նորա. և որ միանգամ բնակեալ էին յամրոցի անդ, գերի առեալ տանէր, և զկապուտ կողոպուտն յաւարի առեալ՝ սպառ սպուռ քանդէր և աւերէր զամրոցն:

«Չկնի Մըվանայ Մահմետ, զկնի Մահմետի ոստիկան Արտլլա եկն ի Հայս. և զկաթողիկոսն Խառհակ կապեալ շղթայիւք՝ առաջէ ի Դամասկոս ընդ իշխանին Սըմբատայ: Այս Արտլլա սպան գլաւիթ ի


Դուրին, Ապա Ոլորս՝ մեծ ոստիկան և ամիրապետ Ապտուլմէլիք յ85 Թուրին Տաճկաց. և ապա Վլէթ, որդի նորա. և ապա Օմար: Վահան Գողթնացի աստ նահատակի յՕմարայ ի Ռուկափ: Սահակ կաթողիկոս կենդանի 27 ամ գերի գոլով, զնի Եղիա կաթողիկոս: Սա զՆերսէս, եպիսկոպոսն Աղվանից, և զՏէրկին աշխարհին մատեն Օմարայ զորս կապեալ տանին առ նա և սպանանեն զնոսա վասն քաղկեդոնի լինելոյն: Իսկ Հայրապետն հակառակ Օմարայ համարեալ՝ տայ սպանանել (կացեալ) չորեքտասան ամ կաթողիկոս. և ապա՝ Օհան օձնեցին, որ և զնաց առ Օմար:

« Իսկ վերոյասացեալն Աշոտ օծանի Թագաւոր ի հայրապետէն Գեորգայ: Եւ Աշոտի եղբայրն Սմբատ, սպարապետ Հայոց լեալ՝ շինէ զեկեղեցին Բագարանու. ի սկզբան սպարապետութեան իւրոյ զպճնապայծառն շինէ զեկեղեցի ի քաղաքագեօղն Կողբ քաղմածախ ամրութեամբ և ստիպով. և սակաւածամանակ եղեալ՝ մեռանի, և միւս եղբայր արքայի Գաւթի:

« Յաւուրս Սմբատայ լինի խաղաղութիւն աշխարհիս Հայոց. կաթողիկոս՝ Յովհաննէս. և շինին քաղուս եկեղեցիք յիշխանէն Գրիգորէ, ի Սահակայ և ի Վասակայ, իշխողաց աշխարհին Հայոց. Լեւոն, Թաւաւոր Յունաց, յոյժ պատուէ զՍմբատ, նաև իշխանն Տաճկաց խալիֆայ Բաբելունի, Բայց շփոթ աղմկի ի մէջ Թագաւորին Սմբատայ և ի մէջ Թագաւորին Եգերացւոց վասն Կոստանդնի. և յետոյ միջնորդութեամբ Ներսէսի իշխանին հաշտին յետ կալելոյ և կապելոյ զԿոստանդին առաքէ յաշխարհ իւր. բայց Թագաւորն վրաց զՀարեալ յաւէտ վասն յարձակման Կոստանդնի: »

« Ասի յոմանց թէ Հերակլ ոչ զնաց ի պարս. այլ Թագաւորեցոյց Պարսից զԽոռոհամ, որ զնացեալ սպանանէ զԹագաւորն Արտաշիր տղայ գոլով, որդի Կավատայ. և վաղվաղակի առաքէ գիւսչն առ Հերակլ և զօրքն Պարսից սպանանեն զԽոռոհամ: Կաթողիկոս Եղբ, որ զնաց առ Հերակլ,

զրոյց տգէտ, և ոչ տարաւ զՅոնան, այլ զքեռորդին իւր, որ հաւանեալ զրեցին խորամանկութեամբ Յունաց թէ. Նըովեմբ զամենայն հերձուածօղսն բաց ի ժողովոյն Քաղկեդոնի. և տան Եղբի զերբորդ բաժին քաղաքագիւղին Կողբայ և զաղահանքն ամենայն. որ ասի յամ յամէ երկոտասան հազար զեկան էր: Սա Եղբ շինէ զհրաշագեղ եկեղեցին կոչեցեալ սուրբ Գայիանէ և զկաթողիկէն էջմիածնի, որ յառաջ փայտաշէն էր »:



ՊԱՐՍԱԿԱԶԱՅ ԱՇՈՒՂՆԵՐ

ԵՐԳԻՑ ՏԵՐ ԿԱՐԱՊԵՏ ՕԶԱՆԵԱՆ

(Շար. տես թմբ. 1922. էջ 39)

2. ԿՐՈՆԱԿԱՆ: Տէր-Կարապետի երգերը չէ սահմանափակուում բարոյական-խրատական երգերով: Ընդարձակ բաժին են զբաւում նրա կրօնական երգերը, որոնց մէջ երգին արտայայտուում է իր կրօնական աշխարհայեացքը, զգացումներն ու մտորումները և որոնցից երևում է որ նա ջերմեանդ հաւատացող է և իբրև ճշմարիտ քրիստոնեայ խորապէս տոգորւած է քրիստոնէութեան հաւատքի, յուսոյ, սիրոյ և զթութեան զաղափարներով: Այդ ստանաւորներից չորսը այբուբենի տառերի կարգով գրւած կրօնական գողտրիկ էջեր են, որոնց մէջ երգիչը Նարեկացու շնչով փառաբանում է և զրւատում Բարձրեալն Հօր և Յիսուս-Քրիստոսին մեծութիւնն ու հզօր զօրութիւնը, ապա ողորմութիւն է հայցում:

Աստած բարձրեալ և յոյժ անդ տէրութիւն, ինքնագոյ և զօրեղ Թագաւոր ես դու. Ողորմած և զթած Տէր բարեբար ես, Արդարագործ արանց միշտ կամարար ես, Ամենագէտ և ճշմարիտ արդար ես, Հմարտութեամբ դատող դատաւոր ես դու:

Կամ՝